ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

14 02 2014 թվականի N 20 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԼԱՆՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ստորագրված «Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի» փոխըմբռնման հուշագրով նախատեսված գործողությունների կատարման ժամանակացույցի 4.13-րդ կետի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 194-Ա հրամանով հաստատված հավելվածի 4.13-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի Հանրային տեղեկատվական պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մկրտումյանին, կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Է. Պապյանին,

կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար Ա. Մուրադյանին, կոմիտեի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի պետ Տ. Բաղդասարյանին՝ ձեռնարկել համապատասխան գործողություններ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

3. <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>>, <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների գլխավոր տնօրեն պրն Պ. Լորենին, <<Մելիորացիա>> ՓԲԸ տնօրեն պրն Վ. Թադևոսյանին, <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ տնօրեն պրն Ս. Հովհաննիսյանին, <<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ տնօրենի պաշտոնակատար պրն Է. Սարգսյանին՝

ա) հանրությանը առավել ընդգրկուն և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իրենց ինտերնետային կայք էջերի ստեղծման (պարբերաբար թարմացման) ուղղությամբ,

բ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կոմիտեի ինտերնետային կայքում տեղադրելու համար:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մկրտումյանին:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված

ՀՀ ջրտնտպետկոմիտեի նախագահի

2014 թվականի դեկտեմբերի 14-ի

N 20 -Ա հրամանի

Հանրային տեղեկատվական պլան

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի

1. Հանրային տեղեկատվական պլանի ներդրման անհրաժեշտությունը

Ջրային ոլորտում անցած տարիների բարեփոխումների ընթացքում ձեռք բերված առաջընթացների հետ զուգահեռ (ջրամատակարարման տևողության ավելացում, ջրամատակարարման ծառայության և ջրի որակի բարելավում, ջրաչափության ներդրում, հավաքագրման բարձր մակարդակի ապահովում, ջրամատակարար կազմակերպությունների ֆինանսական կենսունակության բարձրացում, նոր ջրային համակարգերի կառուցում և այլն) առաջացել են նոր պահանջներ՝ ոլորտի հետագա կայուն զարգացման և բարեփոխումների շարունակականության ապահովման համար: Հաշվի առնելով այդ բարեփոխումների անհրաժեշտությունը և հրատապությունը՝ ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն նախատեսում է անդրադառնալ ոլորտի հետագա զարգացմանը, ինչպես նաև նախաձեռնել անհրաժեշտ միջոցառումներ և ուսումնասիրություններ ջրային տնտեսության ոլորտի բոլոր ուղղություններով, այդ թվում՝ կապված երկարաժամկետ խորացված պետական-մասնավոր համագործակցության կիրառման (վարձակալության, կոնցեսիա և այլն), հնարավոր ռիսկերի և պետական գույքի կառավարման արդյունավետության գնահատման հետ:

2. Հանրային տեղեկատվական պլանի ներդրման նպատակը

Հանրային տեղեկատվական պլանի ներդրման նպատակն է առավելագույնս բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում ջրային տնտեսության ոլորտում առկա վիճակի, հետագա զարգացման և ֆինանսավորման վերաբերյալ ՀՀ կառավարության քաղաքականության, ինչպես նաև, ընդունված ռազմավարության վերաբերյալ հանրային

իրազեկության մակարդակը: Նշվածը հատկապես կօգնի հասարակության լայն շերտերին ավելի լավ հասկանալ և ընկալել ՀՀ կառավարության (ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի) ջրային ոլորտի զարգացմանը և հետագա բարեփոխումներին նպաստող գործողություններին, ինչպես նաև սատարման առավել ամուր հիմքեր կստեղծի բարեփոխումների համար, այդ թվում՝ նաև սակագնային քաղաքականության և մասնավոր հատվածի մասնակցության մասով: Այն նաև կօգնի բացահայտել ջրային տնտեսության ոլորտում բիզնես հնարավորությունները:

3. Հանրային տեղեկատվական պլանի հնարավորությունները

Հանրային տեղեկատվական պլանը հնարավորություն կընձեռի՝

• ջրային ոլորտում իրականացվելիք բարեփոխումների իրականացման համար ապահովել համապատասխան ըմբռնողականություն և սատարում.

• տարբեր շահառուներին ավելի լավ մասնակցություն ցուցաբերել այն որոշումներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ իրենց գործունեության վրա:

4. Հանրային տեղեկատվական պլանի թիրախային խմբերը

Հանրային տեղեկատվական պլանի նպատակի հիման վրա սահմանվել են հետևյալ թիրախային խմբերը.

1. Պահանջարկի խումբ (լայն հանրություն).

2. Առաջարկի խումբ (համակարգի ջրամատակարար ընկերությունները, ծրագրեր իրականացնող կազմակերպությունները, ներդրողները, խորհրդատուները, կապալառու կազմակերպությունները):

5. **Պահանջարկի խմբի համար հիմնական տեղեկատվությունը**

Պահանջարկի խմբի համար հիմանական տեղեկատվությունը բովանդակում է՝

- ՀՀ կառավարության ջրային ոլորտի վերաբերյալ ընթացիկ և առաջարկվող քաղաքականությունը և ռազմավարությունը.
- Հիմնական պատասխանատու մարմինները (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները) և նրանց կոնկրետ դերակատարությունն ու պատասխանատվությունը՝ կապված ջրային տնտեսության ոլորտի հետ.
- Առկա և պլանավորվող ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն.

- Ջրային տնտեսության ոլորտում գործող և առաջարկվող կազմակերպչական կառուցվածքը (կազմակերպություններ, պետական հիմնարկներ և այլն).
- Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը՝ տարածաշրջանի այլ երկրների հետ համեմատած.
- Մասնավոր ոլորտի ներգրավման անհրաժեշտությունը, գործունեության արդյունավետությունը և առկա ֆինանսավորումը.
- Ջրային տնտեսության ոլորտում գործող մասնավոր կառավարիչները և ծառայությունների մատուցման սակագները.
- Ոլորտի կառավարումը և կարգավորումը:

6. **Առաջարկի խմբի համար հիմնական տեղեկատվությունը**

Առաջարկի խմբի համար հիմանական տեղեկատվությունը բովանդակում է՝

- ՀՀ կառավարության՝ ջրային ոլորտի վերաբերյալ ընթացիկ և առաջարկվող քաղաքականությունը և ռազմավարությունը.
- Հիմնական պատասխանատու մարմինները (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները) և նրանց կոնկրետ դերակատարությունն ու պատասխանատվությունը՝ կապված ջրային տնտեսության ոլորտի հետ.
- Առկա և պլանավորվող ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն.
- Ջրային տնտեսության ոլորտում գործող և առաջարկվող կազմակերպչական կառուցվածքը (կազմակերպություններ, պետական հիմնարկներ և այլն).
- Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը՝ տարածաշրջանի այլ երկրների հետ համեմատած.
- Մասնավոր ոլորտի մասնակցության առումով ընտրված քաղաքականությունը (մասնավոր ոլորտի ներգրավման անհրաժեշտությունը, արդյունավետությունը, ֆինանսավորումը).
- Ջրային տնտեսության ոլորտում գործող մասնավոր կառավարիչները և ծառայությունների մատուցման սակագները.
- Ջրային տնտեսության ոլորտի կառավարիչների և կապալառուների համար քաղաքականությունը և ռազմավարությունը:

7. **Հաղորդակցման գործիքները**

Առաջարկի և պահանջարկի խմբերի համար հաղորդակցության գործիքները ներառված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Առաջարկի և պահանջարկի խմբերի համար հաղորդակցության գործիքները

Առաջարկի խումբ	Պահանջարկի խումբ
Ներկայացումներ	Գովազդային տեսանյութեր/ֆիլմեր/հասարակական գովազդի տեսանյութեր
Դեմ առ դեմ քննարկումներ	Փաստավավերագրական տեսանյութեր
Թեմատիկ թերթերում/ամսագրերում հոդվածներ	Հարցազրույցներ հեռուստատեսությամբ/ռադիոյով և թերթերով
Ձեռնարկներ	Մամլո հաղորդագրություններ
Առաջարկություններ	Հասարակությունից արձագանքներ հարցումների տեսքով
Տարբեր գովազդային նյութեր (ցուցանակներ, գրքույկներ, բրոշյուրներ, օրացույցներ և այլն) Ինտերնետային կայք՝ ինտերակտիվ հնարավորությամբ	Տարբեր գովազդային նյութեր (ցուցանակներ, գրքույկներ, բրոշուրներ, օրացույցներ և այլն) Ինտերնետային կայք՝ ինտերակտիվ հնարավորությամբ
Աջակցություն՝ օգնել զարգացնելու մասնավոր օպերատորների/կառավարիչների հնարավորությունները	Հասարակության հետ կապերի կայացմանը և հաղորդակցմանն ուղղված գործողություններ՝ հայտնի գործիչների միջոցով: Օրինակ՝ կազմակերպել Ջրի օր և հրավիրել հայտնի մարդկանց, ՋԼՄ-ներին և թերթերին:

8. **Հաղորդակցման հնարավոր միջոցները՝ յուրաքանչյուր թիրախային խմբի համար**

Առաջարկի և պահանջարկի խմբերի հետ հաղորդակցության հնարավոր միջոցները (յուրաքանչյուր թիրախային խմբի համար) ներառված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Առաջարկի և պահանջարկի խմբերի հետ հաղորդակցության հնարավոր միջոցները (յուրաքանչյուր թիրախային խմբի համար)

Առաջարկի խումբ	Պահանջարկի խումբ
ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի ինտերնետային կայք	ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի ինտերնետային կայք
Սեմինարներ/ գիտաժողովներ	Հեռուստատեսություն/ռադիո
Աշխատաժողովներ	Թերթեր/ամսագրեր
Կլոր սեղաններ	Սոցիալական ցանցեր
Ոչ պաշտոնական հանդիպումներ	Թեմատիկ միջոցառումներ

Փորձի փոխանակում	Այցելություններ տարբեր օպերատորների գրասենյակներ և ջրամատակարար կազմակերպություններ
Թեմատիկ միջոցառումների հաճախում/կազմակերպում	Ակտիվ երթևեկելի վայրերում գովազդներ

9. Այլ դրույթներ

Սույն հանրային տեղեկատվական պլանով նախատեսված մի շարք գործողություններ պահանջում է համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավում:

Սույն հանրային տեղեկատվական պլանով ներկայացվող տեղեկատվությունը անհրաժեշտության դեպքում կարող է ճշգրտվել և ենթարկվել համապատասխան փոփոխությունների: